Ը. ՏԱՐԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 27 ԱՊՐԻԼ 1905 ԹԻՒ 708

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի
համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երկուքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ.

—o—

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Char oum“ (Bulgarie) Yarna

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ» Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՕՐԷՆՔ ԵՒ ՕՐԻՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ

Ա.

Կազմակերպված պետութիւնները և ընկերական բոլոր հաստատութիւնները, վարչական ինչ սկզբունքի վրա էլ որ հիմնըված լինեն նրանք, իրենց գերիշխողութեան տակ գտնված հասարակութեան և անհատների շահերը պաշտպանելու, նրանց փոխադարձ իրաւունքները և պարտականութիւնները իրար հետ ճշտող յարաբերութիւնների մէջ պահելու համար ստեղծում են օրէնքներ. Եւ քանի որ ամէն մի օրէնքի հիմնվելու ամենաէական պատճառները մեր վերը յիշածները են, դրա համար էլ ամէն մի օրէնք համապատասխանում է իր ժամանակի տիրող հասարակական ու ընկերական պահանջներին և ընկերական փոխադարձ յարաբերութեանց մասին ունեցած ըմբռնումներին.

Այսօր ամենապարզ մարդի համար որոշ է որ մարդկային ընկերական կեանքը միշտ փոփոխման է ենթարկված, ու դեռ պիտի շարունակվի փոխվել, քանի մարդը գոյութիւն ունի աշխարհի վրա. ուստի շատ պարզ է և այն որ աշխարհում ոչ մի օրէնք յաւիտենական չէ և միշտ ենթակայ է բոլորովին ջնջվելու կամ բարեփոխման.

Սակայն օրէնքները դիւրաւ չեն փոխվում, կամ ջնջվում. Որովհետև ինչպէս յառաջադիմութիւնը, այնպէս էլ պահպանողականութիւնը մարդի յատկանիշներից մէկն է գրեթէ. Օրէնքները փոխվելու համար հարկաւոր են մասսայական օրինազանցութիւններ, որոնք կապացուցեն թէ այլեւս գոյութիւն ունեցող օրէնքը չէ համապատասխանում հասարակութեան մի ստուար մասի ըմբռնումներին և շահերին.

Դժբախտաբար, առ հասարակ հասարակական զանգւածները դժուարութեամբ են հասնում օրէնքների հնացումի և նրանց կեանքի իրական պահանջներին գոհացում չտալու գիտակցութեանը. այդպիսի պարագաներում հնացած, աւելորդ դարձած, հասարակութեան և անհատի համար նոր ստեղծված պահանջների առջեւը պատնէշի նման կտրող օրէնքների աւելորդութիւնը, վնասակարութիւնը և աննպատակայարմարութիւնը ցոյց տալու համար երեւան են գալիս անհատներ, որք թէ քարոզելով, թէ իրենց ընթացքով հասարակութեան հասկացնումեն որ գոյութիւն ունեցող օրէնքները այլեւս չեն համապատասխանում ժամանակի պահանջներին և նրանք ոչ միայն պաշտպան չեն անհատական և ընկերութեան իրական շահերին, այլ ընդհակառակը զէնք են մի որոշ դասակարգի ձեռքում անհատին և ժողովրդին հարստահարելու համար.

Ահա այդ վայրկեանից սկսում է պայքարը հնացած, աւելորդ, վնասակար և հասարակութիւնը ու անհատը շահագործող օրէնքի պահապանների և օրէնքի դէմ կռւողների միջեւ, որոնց առաջինները մկրտում են օրինազանց տիտղոսով, ու յանձնում հէնց այդ անպէտքացած օրէնքների վրա հիմնված դատարաններին, դատախազներին «օրէնքի տառական» ճշտութիւնը և իմաստը զանց առնողին պատժելու համար, որպէս զի հասարակութիւնը նախ սարսափի ազդեցութեան տակ այլեւս չը յանդգնի իր միջից արտադրել մարդիկ, որոնք ընդունակ կը լինեն հասարակութեան հասկացնել թէ այս օրէնքները այսօր միայն մեռած տառեր են, նրանք գործադրվումեն միայն հասարակութեան իրական շահերը պաշտպանողների դէմ, այն մարդկանց կողմից, որոնք օրէնքը իրենց ձեռքում զէնք են դարձրել միմիայն իրերի ներկայ կացութիւնը պահպանելու համար, որի մէջ միայն կարող են իրենց սանձարձակ գոյութիւնը պահպանել.

Մենք յետագայ մի շարք յօդուածներով պատմականօրէն կ'ապացուցենք որ մարդկութեան ամենամեծ բարեկամները եղած են այն անհատները, որոնք ամենախոշոր օրինազանցները են համարվել, իրենց ժամանակի օրինապահների կողմից.

ՎԱՐԴՕ

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ ՈՒ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՌԱՋ

Շատերու տարօրինակ պիտի թուի եթէ յայտարարեմ թէ մեր ազգային դատի պրօպականդը Եւրոպայի մէջ կրաւորական օգտակարութիւն մը միայն ունի.

Այդ անուղղակի հետաքրքրութիւնը, որ միայն հետաքրքրութիւն մըն էր, աւելի ճիշդ գթութիւն մը, արգահատանք մը,— կը ծնի ու կը մեռնի Եւրոպայի ազգերուն ժողովրդական խաւերուն մէջ ու որ եւ է ներգործական նշանակութիւն ունենալէ հեռու է Եւրոպայի առաջ, այսինքն անոր կառավարական շրջանակներուն մէջ.

Պէտք է միշտ արիւն, պէտք է միշտ կոտորած սակայն՝ այդ կրաւորական շարժումը առաջ բերելու համար, որ ինչպէս տեսանք, հոգեբանական, ամբոխային յուզուած մտքի մը արտայայտութիւնն է, հոգեբանութիւն մը սակայն՝ որ գործ չունի դիւանագիտութեան հաշուագէտ ու հաշուագէտ նկատումներուն ու ջղաձգութիւններուն հետ.

Հայկական խնդիրը Եւրոպային ծանօթացնելու համար թափուած ճիգը, թափուած մելանը, մրոտուած թղթերը, տասը տարիէ ի վեր երեւոյթները քննելով մօտէն՝ կը մընան, ուրեմն, ապարդիւն ճարտարուորութիւններ այդ դիւանագիտութեան յաջող վաճառ ու նսեմ ներկայացուցիչներու կողմէն.

Չտեսանք նախարար մը որ անշահախնդրօրէն հետաքրքրուէր հայկական հարցով. չտեսանք նոյնպէս մարդասէր դիւանագէտ մը, որ ոգեւորուէր միայն մարդասէր դատի մը բոլոր պերճութեամբ ու միայն այդ մարդասիրական խօսքը ունենար իր բերնին մէջ, իր գործերուն մէջ, իր ճառերուն մէջ, իր բոլոր հաշիւներուն մէջ.

Հայկական խնդիրը, իրաւամբ, կը շահագրգռէ փայլուն դիւանագէտներ. հայկական դժբաղդութիւնը անշուշտ պիտի խօսեցնել տար իր վըրայ, Արեւելեան ընդհանուր հարցի մէջ ունեցած իր գերագոյն նշանակութեամբ, բայց հայկական խնդիրը երբեք չը պիտի ծնուցանէր լոկ ու միայն մարդասէր շարժում մը իր շուրջը, ու անոր լուծումը երբեք մարդասիրական ճամբով մը չը պիտի ըլլայ.

Մարդասէր Ֆրանսան ցոյց պիտի տաք ինծի, այն Ֆրանսան որ կը վայելէ իր նախնիքներուն գինու զօրութեամբ ձեռք բերած այդ տիեզերական համբաւը, բայց այսօրուան Ֆրանսան Նաբոլէոններու բաղդախնդիր ու արկածալից արշաւանքները ընելու միտքը ոչ միայն, միանգամ ընդմիշտ, իր մէջէն արմատախլած է, այլեւ ընդունած է մեղկ դիւանագիտական ուղղութիւն մը, որուն ամբողջ հեռապատկերը խաղաղ միջոցներով տիրապետելու, այսինքն իր հասողութեան ու ճանկերուն տակ ինկնող ազգերու, տկար ազգերու, կլանելու ու շահագործելուն մէջ կը կայանայ.

Մարոքի խնդիրը այդ բանին փայլուն օրինակն է. Ֆրանսայի արտաքին գործերու նախարար պ. Տէլքասէի այդ երկրին խաղաղօրէն տիրապետելու ծրագիրը, սակայն սարսափելի հակահարուած մը կըստանար Գերմանիոյ արտաքին գործերու միապետ-կառավարչէն, կայսրէն որ իր կարգին յանկարծ մարդասէր մը կը դառնար ու Մարոքի «վայրենի» կայսրութեան պահպանումը ու անկախութիւնը իր պաշտպանութեան տակ կառնէր. Ու այդ դիպուածական մարդասէր-վեհապետը, որ քիչ մը առաջ իր երկաթէ ձեռքը կը դըներ՝ Թուրքիայի միապետին արիւնաթաթախ ձեռքին մէջ, այսօր իր շարժումին մէջ կը ներկայանայ, աւելի մարդասէր քան պատմական Ֆրանսան ու անոր դիւանագիտութեան ներկայացուցիչ պ. Տէլքասէն.

Անգլիական ու ֆրանսական համաձայնութիւնը չէր ծանուցուած Գերմանիոյ կայսեր, Մարոքի խնդրոյն առթիւ, չէր ծանուցուած նոյնպէս Ամերիկային ու... Նոյն իսկ Ֆրանսայի փարլըմանին ու այդ «պզտիկ հաշիւը» ըրած էր պ. Տէլքասէ Մարոքի խաղաղ իւրացումը իրականացնելու իր փութկոտութեան մէջ, հեռացնելու համար Մարոքի բաղդով հետաքրքրուող երկու կառավարութիւններու հանելիք դժուարութիւնները ու իր յաջողութեան պատուն ներկայանալու «յաղթական հանդի-

սաւորութեամբ մը՝ այն փարլըմաննին՝ որուն արտաքին գործերու ներկայացուցիչն է 7 տարիներէ ի վեր։ Ու այդ «պզտիկ հաշիւով» պ. Տէլքասէ գամպէթթա մը դառնալ կուզէր ու գուցէ աւելի. որովհետեւ ֆրանսական հանրապետութեան այդ պատմական վերանորոգիչը՝ հազիւ երեք ամիսներ նախարարական պատիւը վայելած էր։

Պ. Տէլքասէի ծրագիրը ջուրը ինկաւ սակայն՝ կիյօմ Բ.ի աւելի ուժով ծրագրովը ու Ֆրանսայի հանրապետութեան պատիւը ոտնակոխ ընել տալէ վերջ այդ «պզտիկ դիւանագէտը», իր հրաժարականը ներկայացուց, որովհետեւ անոր համար նախարար ըլլալը փառասիրութիւն մըն էր ու միայն փառասիրութիւն մը...։

Ու այսպէս կը տեսնէ՛ք դուք. որ ամենէն մարդասէր մարդիկը, որոնք դիւանագիտութեան ներշնչումը ունին իրենց արտայայտութիւններուն մէջ, երբեք չպիտի ներկայանան վըսեմ դատի մը վսեմ պաշտպանները։ Ու ինչ որ կը խօսին ամբոխին՝ նոյնը չեն խօսիր փարլըմանին. որովհետեւ ամէն բանէ առաջ՝ աչքի առաջ ունին իրենց հեռաւոր փառասիրութիւնները. որոնք ժողովրդականութիւն շահեցնող ճարտարաւորութիւններով միայն կրնան եւ պիտի իրականանան. ու այդ մարդիկը պիտի զոհեն երբ իրենց փառասիրութիւնը գոհացնող պաշտօնը վտանգի մէջ տեսնեն, ո՛չ միայն հեռու Հայաստանի մը կամաւոր պաշտպանութիւնը, այլ նոյնիսկ իրենց երկրին շահերուն հարկադրողական պաշտպանութիւնը։

Ու եթէ պ. Տէլքասէ իմանար իրեն սպասող այդ անակնկալը Գերմանիոյ կողմէն, երբեք չպիտի մտահոգուէր Մարօքի խաղաղ տիրապետութեամբը», քանի որ այդ բանը, իրեն համար փառասիրական գործ մըն էր եւ ոչ մարդասիրական՝ ինչ որ ցոյց տուաւ իր մէջ նետած հրաժարականով։

Եւրոպայի մէջ առաջ տարուած հայկական հարցի պրոպականդը իր հետեւաւոր օգուտները կրնայ միայն ունենալ. ու հայկական հարցը կը լուծուի Եւրոպայի միջամտութեամբ այն ատեն միայն երբ վտանգի ենթարկուին այս վերջինին շահերը։ Այդ տեղ է վերին նշանակութիւնը երկրին յեղափոխական գործունէութեան որ միակ ու փրկարար ուղին է ազատագրութեան գործին։

Գեղեցիկ ճառեր, հռետորական ատենախօսութիւններ շատ լսուեցան փարիզեան ընդարձակ սրահներուն մէջ, բայց ամբոխ լացնող ու միայն լացնող այդ խօսքերուն երբեք չընկերացաւ գործը. ո՛չ զինու զօրութեամբ միջամտութիւնը, այլ գոնէ բարոյական ազդեցիկ միջամտութիւնը հայկական ցաւերը ու անոր գլխէն թափած չարիքները մ[illegible]ղմելու համար։

Այդ յուզող խօսքերուն չը յաջորդեց նոյնպէս համախմբումը անձնուէր գործիչներու, օտար մարդասէր գործիչներու ըսել կուզեմ, որոնք իրենց բուն գործ չինէին հայկական դատը ու զայն լուծելու հետապնդէին։ Ու իւրաքանչիւր անգամ երբ պէտքը կըլլայ այդ «մարդասէրներուն» դիմելու, իւրաքանչիւր անգամ պէտք կըլլայ այդ դիմումին անախորժ խունկոտանները հարթել՝ անոնց ձրի խօսքին օգնութիւնը ստանալու համար։

Արդի Եւրոպան ու իր դիւանագիտութիւնը՝ խաղաղ տիրապետութեան քաղաքական ուղղութիւն մը ունի. ու խաղաղ միջոցներով կարելի չէ նափոլէոնական ժէստեր ընելու ու այդ դիւանագիտական ժեստին կարօտ է հայկական խնդիրը լուծելու համար։

Գ. Գուրգէնեան

Փարիզ

ՌՈՒՍԱԿԱՆ ՆՈՐ ԱՐՄԱՏԱՆ

Ռուս-Ճարոնական ճակատամարտը հեղ մըն ալ իր աղետաւոր անակընկալներու նախօրեակին մէջ կը գտնուի։

Ո՞ւր են հազիւ դեռ քանի մը շաբաթներ առաջ ֆրանսական թերթերու թմբկահարած մօտալուտ խաղաղութեան աւետիսները. ո՞ւր են «վըրտահար ու ընկճուած» ցարի հաշտութեան բանակցութիւններ սկսելու անո՛ւշ ու երերուն պատգամները, անշուշտ ռուս գործավարներու հոգատար թելադրանքով, հետ ի հետ կը փութացնէին օրէ օր, ժամէ ժամ...

Պահ մը կանգ առած են այդ բոլորը՝ Ցարսկօյէ Սէլօի ղեկավար խմբակը բաւական յաջողեցաւ իր կանխամտած ծրագրին մէջ՝ թէ երկրին ներսը եւ թէ արտասահման։

Փոթորկած ամբոխը ներսը քիչ մը հանդարտեցաւ՝ լսելով այդ ամօքիչ օրօրները։ «Կորչի՛ Ցարիզմը, կորչի՛ պատերազմը» աղաղակները պահ մը անհամեստութիւն համարեցին այդ միեւնոյն բողոքները կրկնել. քանի որ արդէն զայն սարքողներն էին, որ հիմա ալ վերջացնելու խօսքեր կընէին։ Իսկ արտասահման, շնորհիւ Ֆրանսական մամուլին, սկսած մեծահռչակ «Թան»էն մինչեւ յետին եղկելի «Բաէսօ»ն ու «Բաթրի»ն, իրենց Ս. Պետերսպուրկեան թղթակիցներու միջոցով, որոնց ամեն օր եռարձր ու իրազեկ անձնաւորութիւններէ լսած եւ աւետած լուրերը անկասկած էին խաղաղութեան շուտափոյթ կայացման համար, կարելի եղաւ ատեն մը հաւասարակշռութիւնը կերակրել այդ անամօթ սուտով և մոռցնել տալ ներքին հակամարդկային գազանութեանց դրուագները...

Սակայն և այնպէս, միւս կողմէն ռուս բանակն ու նաւատորմը ճակատագրական ճիգեր կընէին իրենց մնացած գոյութիւնը վերակենդանացնելու համար։ Րօժդէստվէնսկի, Հիւսիս. Ծովու քաջահամբաւ հերոսը, մեծ պատրաստութեան մէջ էր իր նաւերը ածուխով բեռցնելու և գալիք կռուին դիմագրաւելու համար։ Բանակի ընդհանուր հրամանատարութիւնը կը յանձնուէր Լինիեվիչի և այսպէս, կըլլուէր ամեն ինչ որ հարկ էր նոր և անեղ մարտ մը մղելու համար։ Բալթը կը յուսային...

Կար եթէ այս բոլոր խայտառակ աւլիրը իրականութեան ճշմարիտ իմաստին հիմնապէս ծանօթ մէկը, այդ ալ Միքատօյի երկիրն էր։

Մինչդեռ մամուլը իր ուզած թընով կը թրթռացնէր խաղաղութեան և հաշտութեան քնարին անուշահունչ լարերը, ան մինչ սառնախոհ ու ինքնամփոփ, կը շարունակէր պատրաստուիլ, կը շարունակէր արթուն ու աչալուրջ մնալ։ Ո՛չ Մուքտէն եւ ոչ ալ Թիէ-Լինկ չը գինովցուցին ու չը թմրեցուցին իր յաղթապանծ հոգին և ահա՛, այսօր, երբ ռուսական այդ ստորնութիւնը իր իսկատիպ գոյնով մերկ կեցած է հրապարակի վրայ, երբեք աւաղելու կամ զղջալու պատճառ մը չունի ան։ Որքան որ Րօժէսթվէնսկի յաջողեցաւ իր խարխուլ ու ղաւաճան պետերուն խաղերէն օգուտ քաղելով նախապատրաստուիլ, նոյնքան և Թօկօ իր հեռատես ու բանիմաց ռազմագիտութեան շնորհիւ արդէն պատրաստ է, որքան որ Լինիեվիչ կրցաւ զանազան հնարներով հռչակաւոր Կուրոպաթքինի թողած պարտուած բանակին ողբալի տէպրիները իմի հաւաքել, նոյն չափով պատրաստուեցան և այժմ ալ կազմ ու արթուն են Կուրոքիի, Նօկիի, եւ Նօծուի քաջամարտիկ բանակները։

Միայն հանրապետական ազատ Ֆրանսայի մամուլը չէր, որ կատարեց վերոյիշեալ շատ տխուր ու անպատուաբեր դերը. Կառավարութիւնն ալ չի զլացաւ իր բարերար աջակցութիւնը իր յաղթահարուած դաշնակցին, որուն առօրեայ կրած հարուածները մեծ ցաւ ու հոգ են պատճառած իրեն շնորհիւ Պ. Տէլքասէյի խոհեմ կանխահոգութեան՝ Րօժէսթ-

ԷՋ ՄԸ ԿՈՐՔԻՅԷՆ

Ռուս տիեզերածանօթ երիտասարդ գրագէտ-վիպագիր Մաքսիմ Կորքիի յունվար 22ի առթիւ Պօղոս Պետրոս ամրոցը նետուելուն մանրամասնութիւնները արդէն ծանօթ են մեր ընթերցողներուն։

Բանակալ կառավարութեան մը ստորհոգի սպասարկուներուն այդ անվայել վարմունքը, որքան որ ոչ-եզական ինքնին, սակայն եւ այնպէս, մեծ իրարանցում յառաջ բերաւ եւրոպական բոլոր խաւերուն, նա մանաւանդ գրագիտական շրջանակներում, ինչպէս նաեւ տեղական ազատ մտքի ու մամուլի ներ- ներկայացուցիչների մէջ։ Կառավարութիւնը վերջապէս հարկադրուեցաւ տեղի տալ և 10,000 րուպլի երաշխաւորութեան մը փոխարէն ազատ արձակել զայն։

Իր արձակումէն անմիջապէս յետոյ Կորքի գրած է փոքրիկ էջ մը, որ իր բոլոր միւս կտորներուն նման, որուն այս պահուս աւելի քան երբեք ծանօթանալ սկսած են ամեն երկրի գրական խաւերուն մէջ սարսռեցուցիչ իրականութեան մէկ կենդանի նմոյշն է—թեթեւ պատկեր մը ռուսական դժոխատիպ բանտ-շէնքերուն մէջ տառապող անմեղ ու ցաւատանջ հոգիի մը կեանքին։

Աւելորդ չենք սեպեր թարգմանօրէն ներկայացնել այդ յուզիչ կտորը Շարժումի ընթերցողներուն։ Մ. Ց.

ԲԱՆՏՈՒՄ

Քանի մը րոպէ խուցին մէջ քայլափոխելէ վերջ՝ բանտարկեալը բարձրացաւ լուսամուտի յենոցին, մօտեցուց գլուխը երկաթէ վանդակապատին ու մնաց այդպէս, վրդով խոհանքի մը մէջ ընկղմած։

Դուրսը, գիշերուան թանձր մթութիւնը կը խտանար խուցին լուսամուտին հանդէպ, կարծես բանտարկեալին աժգոյն ու ընկճուած դէմքը այլայլելով։ Ձիւնի թեթեւ հատիկներ. մերթ ընդ մերթ թափանցելով մթութիւնը, կը չփուէին մելամաղձօրէն ապակիներուն և գիշերուան սեւութեան մէջ կուլ տրուելով կանհետէին։

Իրեն այնպէս կը թուէր թէ՝ մարդոց բովանդակ կեանքն ալ պարուրուած էր հոծ խաւարի մը վայրագութիւնով համակուած։ Մարդկային բոլոր արարքներն ալ էին, որպէս ապուշ ատելութենէ մը ծնունդ առած դժկամակ տենչ մը չարագործելու, բռնանալու, նեղելու։

Այս անարգ զգացումը, այնքան սինիք որքան գազանաբարոյ, այնքան նենգաւոր որքան արիւնարբու. աշնանային մթնշաղին բովանդակ կեանքը կը զունաւորէր սեւահար ներկով մը։ Եւ այս ոճրագործ մարդկութեան վայրագ խառնուրդին միջեւ հոս ու հոն կը նշմարուէին՝ երկիւղածօրէն՝ ինչպէս ձիւնի ճերմակ հատիկները գիշերուան մէջ, էակներ՝ քաղցրաբարոյ հաճելի ու անզօր, ինչպէս վերահսկիչ օֆիցէրներովը։

Ցիշոխութեան մէջ անոր երկիւղած բողոքը հնչեց.

— Տէ՛ր Աստուած, ի՞նչու մարդոց մէջ այսքան անգթութիւն և չարամտութիւն կայ... տէ՛ր. ինչո՞ւ...

Բանտարկեալը վար ցատկեց ու բըսկըսաւ քայլափոխել։ Գաւիթին անշարժ հանդարտութեան մէջ կը լըսուէր տարօրինակ աղմուկ մը, վազող ջուրի խշրտոցը յիշեցնելով։

Կանգ առաւ, ականջը ուղղեց։ Իրենինին դէմը եղող խուցին մէջ մէկը բարձրաձայն կը խօսէր, անկապ բառերու մէջ կորսուած արտաբերումներով, որոնց կը միախառնէր բողոք մը։ Գաւիթին վերի ծայրը բանտապահները ցած ձայնով կը խօսակցէին։

Ցանկարծ, իր խուցին մէջ արտասովոր աղմուկ մը լսեց — քանի մը մեղմ արագ բաղխումներ՝ անկանոն ընդմիջումներով։ Դարձաւ ու նշմարեց մուկ մը, որ ճեղքեց սենեակը ինչպէս բամպակի կծիկ մը ու ապաանկողնին տակ անյայտացաւ։

Սակայն պահ մը վերջ, միեւնոյն աղմուկը կրկին լսելի եղաւ. այս անգամ աւելի յամառօրէն։ Բանտարկեալը սարսռաց։ Թեթեւ յուզումով մը քանի մը քայլ առաւ, պնդօրէն սեղմեց ափը այն պատին՝ ուրկէ ձայնը կուգար, ապա սկսաւ հետազօտել, որպէս թէ ծագումը գիտնալ կուզէր։ Զոր ու յամառ հարուածները նորէն լսելի եղան...

*
* *

Քանի մը օր վերջ բանտարկեալը հանգչած էր լուսամուտի յենոցին վրայ — իր սիրելի անկիւնը։ Վերմակին մէջ փաթթուած, պռստած յօնքերով, պատուհանին վրայի ֆանդասիք պայլորակները կը դիտէր,

վէնսկիի նաւատորմը յաղթեցաւ, հակառակ միջազգային 1878ի գոնկրէի որոշումներուն, սովորականէն շատ երկար մնաց Քամրան ծոցը եւ հոն անվրդով իր նաւերը ածխաբեռնել, մինչեւ որ անգլիական մամուլը գլուխ վերցուց. մինչեւ որ Ճարոնական կառավարութիւնը իր սովորական մեղմ ու քաղաքավար հեռացման թելադրանքին ապարդիւնութիւնը տեսնելով՝ սպառնաց այդ նաւահանգստին չէզոքութիւնը չը ճանչնալ և կռուել, մինչեւ որ Բարիզի Ճարոնական մինիստրը Մօնտօ քարեմիտ Տէլքասէին յիշեցուցեր էր դերը.. Այս վերջին դէպքը բաւական երկար ու խիստ խրատանցում յառաջ բերաւ անգլիական և ֆրանսական մամուլին միջեւ, որուն վրայ աւելորդ կը համարենք ծանրանալ։ Սա չափ միայն ըսենք, որ երբ ասկէ քանի մը օր առաջ Պալթիկի նաւատորմը, Ճարոնական սպառնալիքին վրայ, հարկադրուեցաւ թողուլ Քամրան ծոցը, այդ պահուն Ֆրանսական մամուլը, մանաւանդ այն մասը, որ «Տէֆանս Նասիօնալ»ի ցաւով է բռնուած, ցոյց տուաւ իր ամբողջ գոյնը.., Անգլօ-Ճարոնական դաշնակցութիւնը մեծ յաջողութիւն տարաւ... կը գոչէին, դիպլոմաթական տեսակէտով...»

Այո, բացարձակ իրողութիւն մըն է այդ։ Եւ հիմա իրենց դաշնակցին պատիւը պահպանելու համար ուրիշ բան չունին, բայց եթէ կերակրել ու սնուցանել ընթերցողները, ինչպէս առեն մը առաջ խաղաղութեան, այս անգամ ալ Ռօժէստվէնսքի արմատային, անոր կատարելապէս կազմ ու պատրաստ նաւատորմին հակայութեան առաւելներով, որուն յառաջխաղացման վերջնական քայլը պիտի առնուի երբոր Նէպօկաթօվի նաւատորմը գայ և միանայ իրեն, որուն համար ըստ իրենց, տեսանելի արգելք մը չկայ երբէք և ճանապարհը ազատ է...

Իսկ Թօկօ՞ն... Անյայտութեան քառսինմ էջն է ան։ Շարք մը թերթեր կը ջանան ինքնատիպ լուրերով այս կամ այն անկիւնը ցոյց տալ զինքը, սակայն իսկութիւնը տարակուսելի է։ Երկար առենէ ի վեր Ճարոնական թերթերը անգամ լուռ են այդ մասին, որովհետեւ ամէն հաղորդակցութիւն և մինչեւ իսկ պաշտօնեաներու սեփական նամակցութիւնները կանգ առած են։

Նաւային այս վերջին բաղխումը, — որովհետեւ այժմ ռուս նաւատորմն ալ կանոնաւոր ոյժ մը կը ներկայացնէ. — պիտի ըլլայ ահաւոր ու վճռական։

Ռօժէսթվէնսքիի վերջին խօսքերն են. — «Պատերազմէն առաջ՝ յայլեւս չը պիտի հեռագրեմ կրկին։ Եթէ յաղթուիմ Թօկօն պիտի յայտնէ ձեզ։ Եթէ ես յաղթեմ իրեն, ես պիտի հաղորդեմ ձեզի»։

Իսկ մեզ կը մնայ, ուրեմն համբերել եւ յուսալ։

Մ. ՑՈՒԼԱԿ

ՄԱՆԻՖԵՍՏ

Եւրոպայի Հայ Ուսան. Միութեան Զ..րդ կօնգրէսին (1905 Թ. Ապրիլ ամսին) մասնակցող Սոց. Դեմ. պատգամաւոր եւ անդամների կողմից, ուղղած բոլոր Հայ Սոց. Դեմ. Ուսանողներին.

ԸՆԿԵՐՆԵ՛Ր,

Ի նկատի ունենալով, որ հայական կեանքի դասակարգային շահերի անժխտելի դիֆերենցիացան և դրանով պայմանաւորուած հասարակական տարբեր իդէալներ անհրաժեշտօրէն արձագանք են գտել հայ ուսանող երիտասարդութեան մէջ և առաջ են բերել հասարակական-քաղաքական զանազանակերպ ձգտումներ.

Ի նկատի ունենալով, որ միանգամայն անկարելի է և հակաբնական է մի նպատակի շուրջը և միեւնոյն ֆիրմայի տակ համախմբել տարբեր աշխարհահայեացքի տէր հետեւզօրէն տարբեր ինչպիսին ներկայացնում է այժմ Եւրոպայում սովորող հայ ուսանողութիւնը.

Ի նկատի ունենալով որ իւրաքանչիւր կօլլեկտիւ մարմին կամ հասարակութիւն անկարող է կուսակցութիւններից բարձր կանգնել, մանաւանդ քաղաքական-հասարակական հողի վրայ, և նա այսպիսի դէպքում կը դատապարտէ իրեն կատարեալ անգործնէութեան, ինչպիսին վկայում է Հայ Ուսան. Միութեան վերջին տարիների անպտուղ գործութիւնը.

Ի նկատի ունենալով վերջապէս, որ Եւրոպայում սովորող Հայ Սոց. Դեմոկր. ուսանողութիւնը իր յատուկ աշխարհահայեացքով, իր առաջնորդող սկզբունքներով և կուսակցական ըը նորոչ շահերով բացարձակապէս անկարող է թէ «եսականապէս և թէ գործնականապէս նոյն միջավայրում սովորող հայ նացիոնալիստ (Դ. կան և Հնչ. եան) ուսանողութեան հետ որ և է գործի մէջ տեական իրական մասնակցութիւն ունենալ, ահա ի նկատի ունենալով այդ բոլորը, վերոյիշեալ կօնգրէսին մասնակցող Սօցիալ-Դեմոկրատները, թւով 17 ձայն ընդդէմ 34ի, վճռեցին Եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւնը՝ որպէս այդպիսին, փաստապէս կազմալուծուած եւ հեռացան 6րդ օրուայ ծրեկոյան նիստից։ Այսուհետեւ այդ միութիւնը չի կարող այլեւս համարուիլ իբրեւ մի ընդհանուր հասաքական մարմին, որ իր մէջ ամփոփէ համայն հայ ուսանողութիւնը, որովհետեւ նրանից անջատվում է ուսանողների մի զգալի տոկոս։

Ըստ ինքեան պարզ է, որ թէ ներկայ և թէ ապագայ հայ սօցիալ դեմոկրատ ուսանողութիւնը իր պրօլետարական-դասակարգային շահերի հայեցակէտով, անկարող կը լինի մի մարմնի մէջ ձուլուելու և միասին գործելու այն ուսանողական տարրերի հետ որոնք իրենց հասարակական դաւանանքով և գործնական ձգտումներով կանգնած են ազգայնական (նացիոնալիստական) շահերի հայեցակէտի վրայ։

Համագումարին մասնակցող
Սօցիալ Դեմոկրատ պատգամաւորներ
և անդամներ

Բեռն, Ապրիլ 8ին

ԳՈՑ ՆԱՄԱԿ

ՄԵՐ ԱԶԳԱՑԻՆՆԵՐՈՒՆ Ի ՍԻԼԻՍՏՐԷ

—○—

„Շարժումի 70Տրդ թիւին մէջ Սիլիստրէի յայտնի գործիչ (!!!) ունայնամիտ և փառամոլ Խ. Ռ.ին հասցէին „Բաց նամակ“ մը կար „Անցորդ“ ստորագրութեամբ։

Կը շնորհաւորենք Պ. նամակագրին պարզամտութիւնը որ առանց ճանչնալու Խ. Ռ.ին մարդու տեղ դրած հաշիւ կը պահանջէ, բարեկամ դուն „վազ անցիր այդ հաշիւէն, ինչպէս „վազ անցան“ այն մոլորականները իրենց պահանջներէն որ ունէին ժանտագէմ և տխրահռչակ վարդապետի որդի վարպետորդի Տիգրան Ծգնաւորեանէ։ Ասոնք

որ սառոյցը ուրուանկարած էր։

Բանտարկեալը, ցուրտէն կափկափելով, յիշեց այն չոր ու յամառ բաղխումները, որոնք նախորդ գիշերը եկած էին խորշին հին պատէն։ Ու այդ հարուածները փոխուեցան բառերու, մտածումներու...

— Այո՛, կըսէր պատը, կեանքը անդուլ մաքառում մըն է. — մաքառում ստրուկներու՝ ազատութեան համար, մաքառում տէրերու տիրապետութեան համար... Ո՛չ քաղցրութիւն և ո՛չ անդորրութիւն, ո՛չ յաւ ո՛չ ալ լաւութիւն պիտի ըլլայ երբէք, քանի գոյութիւն ունենան տէրեր և ստրուկներ...

Բանտարկեալը հարցուց ինքնին, թէ որո՞ւնը կրնար ըլլալ այդ ձայնը որ կը խօսէր այդպէս դըացի խորշին մէջ։ Ցիշեց իր վտիտ ու նիհար իրանը, որ նկատած էր շրջագայած պահուն եւ եզրակափեց, թէ իր ձայնը անտարակուսելիօրէն սուր էր, անհաճոյ, զուրկ այն լիաթոք հնչումէն, որով ամէն բարի քաղցրաբարոյ մարդիկ օժտուած են։

Դէզ նայուածք մը ուղղեց պատին այն կողմը, որուն ետեւը պառկած էր այդ մարդը, որ կը պարզէր իրեն աղտոտ լաթերի մը մէջ պարփակուած վառ լոյսը։

Ու կրկին, մտածումին մէջէն կանոնաւոր շարքով մը վերստին անցնիլ սկսան ոգեպինդ և ծանրախոհ խօսքեր, պաղ ինչպէս սառոյցը.

— ... Այո՛, կեանքը բարելաւ ու արդար չի պիտի ըլլայ երբէք. քանի որ տէրերը ապականուած են իրենց ամենակալութիւնով եւ ստրուկները մոլորուած՝ հլութիւնով... կեանքը պիտի վերափոխուի սարսափի ու վայրագութեան, քանի որ մարդիկ կը մերժեն ըմբռնել թէ՝ հաւասարապէս չարաբաստիկ ու ստոր է լինիլ՝ ըլլայ ստրուկներ, ըլլայ տէրեր...

Անքնութիւնով կարմրած կափարիչները թարթելով սառոյցին ուրուագծած պատկերակները կը դիտէր ան, ժամանակ առ ժամանակ դառնալով խորշի պատին յոռի ինքնագացումով մը, որ աւելի կը նախընտրէր չզգալ։

Բաւական գիշերներ այս պատը արթնցուց իր մէջ խոհանքներու խաժամուժ մը, որոնք կըզգար թէ իր հոգին ալ կը վերածէին այն միեւնոյն պատկերակներուն, զորս սառոյցը կերտած էր պատերուն վրայ։

Բայց եւ այնպէս, միեւնոյն առեն, հոգւոյն խորը կը պլպլար մտածում մը, որ կը ոգեւորէր զինքը.

— Միահեծանութի՛ւն, անարդարութի՛ւն է այդ... Ուրեմն մարդիկ միայն երկո՞ւ բանակներու մէջ կը խորհին ինքզինքնին... Ես, օրինակի համար. իրապէս ո՛չ տէր եմ եւ ո՛չ ալ ստրուկ...

Այս փոքրիկ չարամիտ մտածումը ծագեցաւ իր մէջ ինչպէս կայծ մը եւ այնքան արագօրէն անյայտացաւ, յաջորդուելով ուրիշներէ, նոյնքան անկեղծ ու լուրջ։ Ատոնք կը դնէին մարդոց վրայ երկար աշխատանք մը, աշխատանք մը յամառ. ցաւալի, ան խօս. գործ մը՝ լի առօրեայ արիութիւնով, հեզաբարոյ, մաքրելով կեանքը հոգւոյն վառ կրակէն, ապա ազատել մեզ ապականուած նախապաշարման մրուրներէն, նախահօր գաղափարներէ եւ հնատիպ սովորութիւններէ։

— Կարո՞ղ եմ ընել այդ, հարցուց ինքնին։ Եւ, մեծ ամօթով, նկատեց որ վախկոտօրէն անտեսած էր է՛ն ճըշ մարիտ հարցը։

Կշռադատեց ինքզինքը անկեղծօրէն

— Կո՞ւզեմ ընել այդ։

* *

Ձմեռնային առաւօտը, ցուրտ ու մթագնած, դանդաղօրէն կը յառաջանար։ Բանտը կարթննար։ Գաւիթին մէջ, դռներուն երկաթաշարքերը վշտահարօրէն կը հնչէին, ժանգոտած ծխնիները կը ճռնչէին ու պաշտօնեաներու հրամանները անլըսելի կընէին խուլ ու վախկոտ ձայները՝ ընդվզող ու կատաղեցուցիչ՝ բանտարկեալներէն։

Նորէ՛ն, իր խորշի դրացիին կատաղի բառերը, ճեղքելով հին քարերը կը հնչէին քաղաքական բանտարկեալին ականջներուն.

— Ան, որ ազատած էր իր միտքը նախապաշարումներու բանտէն, անոր համար այս բանտը գոյութիւն չունի այլեւս. որովհետեւ, ահա՛ մենք կը խօսինք քարերուն եւ քարերը կը խօսին մեզ համար...

Դուրսը, բանտապատին երկայնքն ի վեր, կը քալէ պահապանը, խորասուզուած եղանակով, իր ոտնադափիւնները հնչեցնելով սառնապատ գետնին վրայ։ Պատին վրայ տեղաւորուած է ճգնազգաւ մը, որ գլուխը մէկ կողմ հակած՝ իր կլորակ ու սեւ աչքերով զինուորին շարժումներուն կը հետեւի։

Բանտարկեալը կը դիտէ լուսամուտէն ու իր հոգւոյն մէջ պատասխանը կը փնտռէ...

Թարգ. Մ. Ցոլակ

—✿✿—

երկու ճիւղներ են որոնցմէ հասարակութիւնը կգուշակելը բաւ համարելու է ուրիշ ոչինչ՝

Պր. «Անցորդ» ձեր կամ մեր պահանջներն որչափ օրինական և բանաւոր իսկ եղած լինին դարձեալ գոհացում չպիտի ստանանք, զի Խ. Ռ.ն եբբ աշխարհ եկաւ կա դամորթերու դասուն կը պատկանէր, բայց իր բնական հակումները եւ ձգտումները կը հակառակէին այդ բանին, ուստի բնութիւնը զայն իւր փափագած թանձրամորթ կենդանեաց դասը փոխադրեց՝ մանուկ հասակին մէջ խաշիլով երեսին մորթը ծաղկախտէ. և այդ օրէն Խ. Ռ.ին երեսը դարձաւ անընդունակ կարմրելէ կամ ճերմկելէ, այլ կը մնայ ու պիտի մնայ մինչեւ մեռած օրը ակոսացեալ դեղին սեւ մորթով: Ուստի Պ. «Անցորդ» մեր պահանջները զուր փնտռած պիտի լինինք. այդ ակոսացեալ մորթ դիմակին տակ:

Ինծէ երբէք կան տակաւին Սիլիստրէի մէջ այդ Թիպը չի ճանչցողներ, ու մեր այս գրածներուն վրայ պղտիկ տարակուսողներ, թող դիմեն Խ. Ռ.ին հին պաշտօնեաներուն, անոնք պատրաստ են հաստատել ու աւելին ներկայացնել համոզելու համար թէ իսկապէս «ծուռ Խաչօ»ն աղտոտ գործերու մէջ թաւալող ստորակէտ մըն է մարդուկ անուան տակ:

Սիլիստրեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անօթօլ Լէրօյի Պօլիօ, Փրանսացի հռչակաւոր գիտնական. գրագէտը այս օրերս Սօֆիա գտնուելով բանախօսութիւն մը ընելով գրաւատեր է ազգայնականութիւնը, յայտարարելով որ այդ զգացումը երբէք չի խանգարեր միջազգային գաղափարի զարգացման և տարածման:

—Սօֆիայի մէջ ուսանողներու կողմէն կատարուեր է Նշանաւոր յեղափոխական Տէլչեւի մահուան երկրորդ տարեդարձը:

—Երկրագործութեան Նախարար տօք. Կենատիէվ մեկներ է Հռոմ մասնակցելու համար միջազգային երկրագործական ժողովին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսէն կը հեռագրեն որ հինգ մեծ պետութեանց ցեղապետները շուտով ժողով պիտի գումարեն Մակեդոնիոյ ֆինանսական քօնթրօլը հաստատելու համար:

Թուրք կառավարութիւնը անպաշտօն կերպով Ռուս և Աւստրիական կառավարութեանց գիտեր է որպէս զի մերժեն հինգ պետութեանց քօնթրօլի խնդիրը:

—Գերմանական թերթի մը Պոլսէն կը հաղորդեն որ Անգլիա օգտուելով Թուրքիոյ Եէմէնի մէջ ունեցած նեղ վիճակէն, կուզէ որ Մակեդոնիոյ վերաբերեալ իր ծրագիրները իրագործուին:

—Սանայի գրաւումը արաբներու կողմէն, մանաւանդ որ արաբներու կողմը անցած է վեց վաշտ Թրքական զինուորներ, պալատին մէջ իրարանցում ձգեր է: Կառավարութիւնը մեծ քանակութեամբ Եէմէն զօրք ղրկել որոշած է արաբները վերջնապէս ճնշելու համար:

—Պոլիս կապտուի Պուլկարիոյ բօսթ. հեռագրական վարչութեան պետը՝ Սթօյանօվիչ վերսկսելու համար բանակցութիւնները բօսթային համաձայնութիւնը կայացնելու համար:

ՌՈՒՍԻԱ

Մեծ իշխան Սէրգէյի սպանողը բողոքեր է պատաժճարին դէմ, յայտարարելով որ փաստաբանը լաւ չէ պաշտպանած:

—Բարիզէն կը հաղորդեն որ ռուս կառավարութիւնը Աւստրիական, Գերմանական և Անգլիական գործարաններուն 200 միլիոն փամփուշտ պատուիրեր է:

—Բեթերսպուրկէն Ֆրանսական թերթերուն կը հաղորդեն որ կառավարութիւնը որոշած է երկու երեսփոխանական ժողովներ կազմել, ազնուական եւ պարզ քաղաքացիներէ կազմւած: Այդ ժողովները խորհրդական ձայն պիտի ունենան, այդ մասին շուտով պիտի հրատարակուի կայսերական հրովարտակով:

—Ռուսական հին դաւանութեան պատկանողները ցարի ազատութիւն շնորհող հրովարտակին առթիւ որոշած են մէկ միլիոն րուպլի տալ Սիպերիոյ երկաթուղիի երկրորդ գիծը շինելու համար:

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Բարիզէն կը հաղորդեն որ Ֆրանսական դիւանագիտական շրջանակներու մէջ հաւատացած են թէ Անգլիոյ թագաւորին Բարիզ գալը զբօսանքի համար ճամբորդութիւն մը չէր. այլ թագաւորը Լուպէի հետ ունեցած տեսակցութեան միջոցին խորհրդածութեան նիւթ դարձեր է Ռուս Ճաբոնական պատերազմը և Մարօքի խնդիրը:

ԿՐԵՏԷ

Հռոմէն կը հաղորդեն որ Իտալիոյ Նախարարական խորհուրդը որոշած է որ հարկը ստիպած միջոցին զօրք ղրկէ Կրետէ իշխան Եօրկիոսը գահընկեց ընելու համար:

-- Աթէնքէն ապրիլ 25ին կը հաղորդեն որ Եօրկիոս իշխանը մտադիր է հրաժարիլ:

ԱՆԳԼԻԱ

Անգլիական տասը պատերազմական նաւեր Ճիբրալթարէն մեկներ են ասիական ջուրերը անգլիական ասիական նաւաբաժնին միանալու համար:

ՖՐԱՆՍԱ

Տէլքասէի հրաժարման մասին տարածուած լուրը կը հերքուի «Թան» և «Ժուռնալ տը Տէպա» թերթերէն:

ՃԱԲՈՆԻԱ

Թօքիօէն ապրիլ 25ին կը հեռագրեն որ գրգռումը Ֆրանսայի դէմ հետզհետէ կը սաստկանայ: Ամենաչափաւոր թերթերը կը յայտարարեն որ Ֆրանսան ուղղակի զէնք բարձրացուցեր է Ճաբոնի դէմ: Անոնք կաւելցնեն որ Անգլիա պարտաւոր է արգելք հանդիսանալ երրորդ պետութեան մը միջամտութեան յօգուտ Ռուսիոյ և Ֆրանսան ալ պէտք է հրաժարի իր երկդիմի կացութենէն և ուղղակի Ռուսիոյ կողմը բռնէ:

Ճաբոնիոյ բոլոր վաճառականական խորհրդարանները միջոցներ ձեռք առած են Ֆրան, սայի հետ այլեւս վաճառականական յարաբերութիւններ չունենալու համար:

ՌՈՒՍ—ՃԱԲՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Թօքիօյի մէջ չատ գրգռուած են ռուս Նաւատորմիղին ճաբոնական մթերանաւ մը գրաւելուն պատճառաւ:

—Ճաբոնական ներքին հինգերորդ փոխառութիւնը, 100 միլիոն ենի հինգ անգամ գոցուած է:

—Ապրիլ 24ին Բեթերսպուրկէն կը հաղորդեն որ Կունջուլինէն լուր հասած է թէ ճաբոնական բանակները սկսած են գործել ռուսաց ձախ թեւին դէմ:

— Բարիզէն կը հեռագրեն որ Անգլիոյ թագաւորը, Լուպէ, Ռուվիէ եւ Տէլքասէ խորհրդակցած են հաշտութեան համար միջոց մը գտնալ: որ թէ Ռուսիոյ եւ թէ ճաբոնի կողմէն ընդունելի ըլլայ: Ֆրանսան իբրեւ Ռուսիոյ դաշնակից, Անգլիան ալ իբրեւ Ճաբոնի դաշնակից որոշած են յարմար վայրկեանին միջամտել հաշտութեան համար: Բայց էտուարդ. թագաւորը յայտարարեր է որ Ռուսիա չպիտի ընդունի այդ միջամտութիւնը մինչ նոր ծովային ճակատամարտի վերջանալը: Միջամտութիւնը յետաձգուած է:

— «Նօվօէ Վրէմիա» թերթին թղթակիցը ապրիլ 25ին կը հեռագրէ որ տասնըհինգ օրուան ընթացքին մէջ պիտի սկսուի ճակատամարտը Մանչուրիոյ մէջ:

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Դերասանուհի Տիկին Պայծառ Ֆասուլեաճեանի չաա դեղեցիկ մէկ ասեղնագործութիւնը, Տրդատ թագաւորի մկրտութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորչէն, վիճակահանութեան դրուած ըլլալով, կը ծանուցուի թէ վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ մայիս 1ին, կիրակի ժամը 2ին ազգային վարժարանին մէջ:

ՓՈՒԹԱՑԷՔ ՕԳՏՈՒԻԼ ՈՒ ՕԳՆԵԼ

Համալսարան գիտական ու գրական հանդէսի երկու հատորները (որոնցմէ միայն 50 օրինակներ մնացած են), փոխանակ իրենց «իրական արժէքովը 22 ֆրանքի» ծախուելու, "կը ծախուին 15 ֆրանքի» միայն:

Աւելորդ է խօսիլ անոր բովանդակութեան չահեկանութեան մասին, որուն վրայ արդէն հայ մամուլի լաւագոյն ներկայացուցիչները ժամանակին շռայլած են գնահատանքի ամենէն փայփայիչները:

Բացի այն որ Համալսարանի երկու կտորները իրենց անթառամ ու հրահանգիչ պարունակութեամբը՝ պիտի ըլլան միշտ ինքնազարգացումով զբաղողներու համայնագիտարանը, այլև լաւագոյն անկիւնը պիտի դրաւեն՝ միշտ փնտռուած և հետաքրքիր գիրքերու մէջ, որոնք պիտի զարդարեն անհատական թէ հասարակական գրադարանները, մնալով ցարդ ամենէն փայլուն նմուշը «Հայ լրագրութեան»:

Համալսարանի գինը տկարացնելով մեր նպատակն է առաջին շուտով տարածել անոր մնացած հատորները հայ ժողովրդին մէջ, որպէս զի իրենց հրահանգիչ նպատակին ծառայեն, երկրորդ գեղեցիկ առիթ մը ընծայել, զայն գնել փութացող ուսումնասէրներուն՝ առանց ո և է զոհողութեան, կարենալ օգնելու Մուշի կարօտեալներուն, որովհետեւ զուտ հասոյթին մէկ երրորդ մասը պիտի յատկացուի այդ վերջիններուն: Գնողներու անունները կամ ծածկանունները, ինչպէս որ իրենք փափաքին, հրատարակուելու են „Հայրենիք»ի նոյն նպատակով բացած հանգանակութեան ցանկին մէջ:

Ամեն տեղի համար երկու հատորները թղթակազմ 15 ֆրանք. կարելի է դիմել Շարժումի խմբագրութեան կամ ուղղակի

Պաղտասարեան 19 rue Vorkjine
Բարիզ

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна